IPRC
Intellectual Property Rights Center

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ՝ պրն. Տիգրան Ավինյանին

պատճենը՝ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար
պարոն Հակոբ Արշակյանին

30 հունվարի 2020թ.

Հարգելի պարոն Ավինյան,

«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամը արդեն երկու տարի Երևանում կազմակերպում և անցկացնում է ապրիլի 26-ի Մտավոր սեփականության իրավունքի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ: 2019թ.-ի միջոցառմանը մասնակցեցին Հայաստանի Հանրապետության Վարչապետ պրն. Նիկոլ Փաշինյանը, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարը, Կառավարության և տարբեր նախարարությունների ներկայացուցիչներ, Ազգային Ժողովի պատգամավորներ, դատավորներ և բազմաթիվ հայտնի ստեղծագործողներ ու արվեստագետներ:

Այս տարի, Մտավոր սեփականության միջազգային օրվան նվիրված միջոցառումը նախատեսում ենք անցկացնել Գյումրիում՝ ապրիլի 11-ին:

<u>Միջոցառումն ունի հետևյալ նպատակները.</u>

1. Հայաստանի տարբեր մարզերի բնակիչներին և Հայաստանում գտնվող արտերկրյա հյուրերին ծանոթացնել Գյումրու մշակույթին և արվեստին,
2. օժանդակել ստեղծագործողներին՝ գնելով իրենց ստեղծագործությունները, և
3. խթանել ստեղծագործական գործունեությունը:

<u>Վերոգրյալ նպատակներից ելնելով Գյումրիում նախատեսվում է անցկացնել հետևյալ միջոցառումները.</u>

1. Գիտաժողով և կլոր սեղան քննարկում մտավոր սեփականությանը վերաբերող թեմաներով,
2. Գյումրեցիների ստեղծագործությունների ցուցահանդես վաճառք (նկարներ, քանդակներ, զարդեր, կերամիկա, և ձեռագործ այլ ստեղծագործություններ),
3. Համերգային և/կամ մշակութային այլ ծրագիր:

Տեղում ուսումնասիրելով Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը և վերջինիս պայմանները կարծում ենք, որ այն ամենահարմար վայրն է վերոգրյալ բոլոր միջոցառումներն անցկացնելու համար: Հետևաբար, խնդրում ենք հնարավորություն ընձեռել վերոնշյալ միջոցառումները Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի տարածքում անցկացնելու համար:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆ
Մուտք թիվ 095/5684
«31» 01 2020թ.

«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամ
ՀՀ, ք. Երևան 0038, Աբելյան 6/4, info@ipr-center.org

«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամը պատրաստակամ է հոգալ գիտաժողովից հետո կազմակերպվելիք հյուրասիրության և համերգային ծրագրի հետ կապված ծախսերը:

Մենք նաև ձեռնարկելու ենք հնարավոր բոլոր միջոցները, որպեսզի ապրիլի 11-ին Հայաստանի բոլոր մարզերից հյուրեր ժամանեն Գյումրի՝ ծանոթանալու Գյումրու արվեստին ու մշակույթին, ինչպես նաև ուղղակի մասնակցություն ունենալու ստեղծագործական գործունեության խթանմանը՝ այցելելով Գյումրիի տարբեր թանգարաններ և ձեռք բերելով գյումրեցիների ստեղծագործություններն ու այլ ձեռագործ աշխատանքները:

Երախտապարտ կլինենք, եթե պետական մարմինները ևս աջակցեն այս լուրի տարածման հարցում և բոլորին հրավիրեն Գյումրի՝ ապրիլի 11-ի միջոցառումներին մասնակցելու համար:

Հարգանքով,

Սուսաննա Կնյազյան
Գործադիր տնօրեն
«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամ